ԲՅՈՒԶԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ «ԵԿԵՂԵՑԻՆ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅՈՒՄ IV ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔԻՑ ՄԻՆՉԵՎ Կ. ՊՈԼՍԻ ԱՌՈՒՄԸ (1204-1453)» ԹԵՄԱՅՈՎ

Ֆրանսիայի Սարասբուրգ քաղաքի Մարկ Բլոկ համալսարանի կամարների ներքո 1960-ական թվականներից հինգ տարին մեկ տեղի են ունենում բյուզանդագետների գիտաժողովներ նվիրված Արևելահռոմեական կայսրության պատմության և մշակույթի կարևորագույն հարցերին: Այս համալսարանը Ֆրանսիայում հայտնի է իր միջնադարագիտական ուղղվածությամբ և հետազոտություններով, շարունակելով վառ պահել XX դ. ֆրանսիական պատմագիտական մտքի խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ Մարկ Բլոկի պայծառ անունը: XX դ. առաջին կեսին Ստրասբուրգը նաև հայագիտության կարևորագույն կենտրոններից մեկն էր Եվրոպայում: Այնտեղ էր աշխատում հայտնի հայագետ-վրացագետ Հովսեփ Կարստը: Ստրասբուրգի չափազանց հարուստ գրադարանում պահպանվում են բազմաթիվ ձեռագրեր ու հնատիպ գրքեր, այդ թվում նաև հայերեն:

2002 թ. նոյեմբերի 7–9-ը Ստրասբուրգի համալսարանական պալատում իր աշխատանքները սկսեց «Եկեղեցին Բյուզանդիայում IV խաչակրաց արշավանքից մինչև Կ. Պոլսի առումը (1204-1453 թթ.)» բյուզանդագետների ութերորդ ստրասբուրգյան հավաքը, որն իր առջև նպատակ էր դրել վեր հանել այդ դարաշրջանի պատմության և մշակույթի մի շարք կարևորագույն խնդիրներ, լուծել դեռևս իրենց լուսաբանությանը սպասող հարցեր: Կոնֆերանսը նախապատրաստել էր Ստրասբուրգի Մարկ Բլոկ համալսարանի պատմության ֆակուլտետի միջնադարագիտության և միջերկրածովյան մշակույթի ուսումնասիրության ամբիոնը պրոֆեսորներ Աստերիոս Արգիրուի և Կատերին Օտենի ղեկավարությամբ:

Գիտաժողովի կազմակերպիչները իրենց առջև խնդիր էին դրել հետազոտության նյութ դարձնել 1204 թ. լատինական կայսրության ստեղծումից հետո Բալկաններում և Փոքր Ասիայում ստեղծված քաղաքական իրավիճակը, Բյուզանդական կայսրության տարածքում ձևավորված պետությունների քաղաքական փոխհարաբերությունները, մուսուլմանական աշխարհի և քրիստոնյա երկրների հակամարտության արմատները, արևմտաեվրոպական նվաճողների և տեղական ժողովուրդների (հույներ, բուլղարներ, հունգարներ, ռումինացիներ, հայեր) մշակութային և քաղաքական առնչությունները, ուշ շրջանի բյուզանդական հումանիզմի հետազոտության սկզբնաղբյուրները և մեթոդաբանական սկզբունքները: Ուստի նրանք Եվրոպայի տարբեր երկրների (Իսպանիա, Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա, Հունգարիա, Հայաստան) համալսարաններից և գիտական կենտրոններից հրավիրել էին այս թեմայի շուրջ ուրույն ասելիք ունեցող մասնագետների:

Գիտաժողովի նիստերից մեկն անվանված էր «Օրթոդոքս եկեղեցին և Իսլամը»: Երեք զեկուցում նվիրված էր քրիստոնեության և իսլամի համա-

տեղ հետազոտության խնդիրներին: Էքս-ան-Պրովանսի համալսարանի պրոֆ. Միշել Բալիվեի զեկուցման թեման էր «Բյուզանդական եկեղեցին և վանականությունը թուրքերի տեսանկյունից»: Հետազոտողը, հիմք ընդունելով XIII–XV դդ. սլավոնական, արաբական, թյուրքական և օսմանյան սկզբնաղբյուրները, փորձել էր դուրս բերել դրանց մեջ եկեղեցուն և վանականությանը վերաբերող վկայությունները համախմբելով դրանք իր զեկուցման համապատասխան բաժիններում: Անդրադառնալով այդ տեղեկությունները հաղորդող սկզբնաղբյուրների ժանրային առանձնահատկություններին (էպոս, պատմություն, վկայաբանություններ, վավերագրեր) հեղինակն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում օգտագործված տերմիններին (քեշիշ, ռահիբ, փափաղ, քենիսե, քիլիսե, մանաստիր, պատրիկ, մետրոպոլիտ): Զեկուցումն ավելի կշահեր, եթե ելույթ ունեցողը փորձեր միմյանցից զատել քրիստոնյա քույր եկեղեցիներից ամեն մեկին վերաբերող վկայությունները և արձանագրեր սկզբնաղբյուրներից յուրաքանչյուրի վերաբերմունքը դրանց նկատմամբ: Քննարկմանը ներկա էր նաև Դանիշմանդնամեի հրատարակիչ, Ստրասբուրգի համալսարանի պրոֆ. Իրեն Թումանովը: Գերմանացի հետազոտող Էրիխ Տրասլը (Բոնն) իր զեկուցումն անվանել էր «Քրիստոնեության և Իսլամի փոխհարաբերությունները լուսաբանող XIII–XV դդ. քիչ ծանոթ մի շարք երկեր», ուր անդրադարձավ Հովհաննես Կանտակուզենի և նրա որդի Մանուել II-ի, Հովհաննես Վրիենոսի, Մակար Մակրեսի և այլոց մատենագրական ստեղծագործություններին: Ավանդական բանասիրական դասակարգման ենթարկելով մեզ հասած երկերը, որոնք հակաճառություններ են Իսլամի դեմ, զեկուցման հեղինակը մեզ հասած ստեղծագործությունները բաժանեց՝ ա) դավանաբանական և հակաճառական, բ) վարքագրական և ճառագրական, գ) պատմական, դ) նամակագրական, ե) հռետորական և զ) փիլիսոփայական երկերի: Պրոֆ. Աստերիոս Արգիրուն, շարունակելով վերոհիշյալ թեման, իր զեկուցման մեջ անդրադարձավ XIV դ. Թեսալոնիկյան մտավորականներ Իսիդոր Գլաբասի, Ակմեոնի և Մակար Մակրեսի հակամուսուլմանական կեցվածքին և դրվածքներին: Կատանիայի համալսարանի պրոֆ. Ռենատա Զանտիլ Մեսինայի զեկուցումը նվիրված էր Կ. Պոլսի պատրիարքների հեղինակության և կայսերական իշխանության դինաստիականության խնդիրներին ու Արսեն Օտորանոսի ճակատագրին: Խնդրի կարևորությունը ընդգծվում է հատկապես նրանով, թե ինչ միջոցներով էր բյուզանդական աշխարհում ապահովվում կայսերական իշխանության օրինականացումը:

Համաժողովի հաջորդ նիստը նվիրված էր բյուզանդական եկեղեցու փոխհարաբերություններին: Էկոլ դը Ֆրանսի բյուզանդագիտական ինստիտուտի տնօրեն Ժան-Կլոդ Շենեն, հիմնվելով IV խաչակրաց արշավանքի նախօրյակին և անմիջապես դրանից հետո դրված երկերի վրա, փորձում էր քարտեզի վրա արձանագրել «Կ.Պոլսի լատին եկեղեցու ունեցվածքը Փոքր Ասիայում»: Մարկ Բլոկ համալսարանի պատվո պրոֆ. Պիեռ Ռասինի զեկուցումն անվանված էր «Արևելքի և Արևմուտքի եկեղեցիների միության անհնարինությունը», ուր հեղինակը մեթոդաբանական եղրակացություններով փորձեց վերարծարծել խնդիրը: Նույն նիստի հաջորդ երեք զեկուցումները նվիրված էին կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցիների ներսում

սկսված միարարական շարժման խնդիրներին: Ամիենի համալսարանի պրոֆ. Կլոդին Դելակրուա-Բեսնիեի ելույթը նվիրված էր Կ.Պոլսի Բերա թաղամասի դոմինիկյան վանքի կրոնավոր Ֆիլիպ Բերացու 1358/59 թ. գրած «De oboedientia Ecclesie Romane debita» («Վասն հնազանդության թուլացած հռոմեական եկեղեցու») երկին, որը մի ժամանակագրություն է Պետրոս Առաքյալից մինչև 1320 թ., ուր հեղինակն անդրադառնում է Հռոմի և Կ. Պոլսի եկեղեցական փոխհարաբերություններին քաղումներ կատարելով կեղծիսիդորյան գրությունից և Գրատյանի ապոկրիֆ հրովարտակից: Միջնադարյան հեղինակն օգտագործել է նաև բազմաթիվ հունարեն սկզբնաղբյուրներ, որոնց միջոցով փորձում է ապացուցել պապական իշխանության առաջնությունը: Այս նյութը կարևորվում է նաև հայագիտության տեսանկյունից, քանի որ նույն դարաշրջանում կիլիկյան Հայաստանում ևս հայտնվում են ժամանակագրություններ և պատմական աշխատություններ, որոնց նյութը սերտորեն առնչվում է քննարկվող մատենագրական երկի բովանդակության և սկզբնաղբյուրների հետ: Կ.Պոլսի և Հռոմի եկեղեցիների փոխհարաբերությունների պատմությանը և հատկապես Ֆլորենցիայի եկեղեցական ժողովին առնչվող խնդիրների պարզաբանումն էին իրենց առջև դրել Փարիզ I համալսարանի դոկտորանտ Մարի-Էլեն Բլանշեն («Պառակտման կողմնակիցների ընդդիմություն Բյուզանդական եկեղեցու ներսում Ֆլորենցիայի Միությունից հետո (1440–1445)») և Թուլուզի համալսարանի դոկտորանտ Թիերի Գանշուն («Բյուզանդական ազնվականության դիրքորոշումը պապության նկատմամբ Ֆլորենցիայի ժողովի նախօրյակին»):

Գիտաժողովի հաջորդ նիստը նվիրված էր Բյուզանդական արևելքի տարածքներում գործող եկեղեցական կազմակերպություններին: Այստեղ երկու զեկուցումներով հատկապես շեշտվեց հայկական տարրի և եկեղեցու ակտիվ գործունեությունը Փոքր Ասիայում և Բալկաններում IV խաչակրաց արշավանքի դարաշրջանում: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի բաժնի վարիչ Ա. Բոզոյանի զեկուցումն անվանված էր «Հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերությունները XIII դարի առաջին կեսին», ուր ներկայացվում էին վերջին տարիներին բյուզանդագետների (հատկապես ակադ. Հր. Բարթիկյանի) կողմից շրջանառության մեջ դրված վավերագրերը ծանրանալով Կոստանդին I Բարձրաբերդցու Հռոմ և Կ.Պոլիս առաքված Հավատո հանդանակի վրա: IV խաչակրաց արշավանքի նկատմամբ հայ ընակչության վերաբերմունքին էր նվիրված Մոնպելիյեի համալսարանի պրոֆ. Ժ. Դեդեյանի «Հյուսիս-արևմտյան Փոքր Ասիայի և Բալկանների հայկական համայնքները IV խաչակրաց արշավանքի նախօրյակին» ելույթը: Քննարկումների ժամանակ շեշտվեց այս խնդիրների հետագա հետազոտության կարևորությունը:

Առանձնակի հետաքրքրության նյութ էր դարձել նաև արևմտաեվրոպական ազնվականության և ֆինանսական շրջանների ու օրթոդոքս եկեղեցու փոխհարաբերությունները: Վենետիկի բյուզանդական և ուշ բյուզանդական հելլենական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, Աթենքի համալսարանի պրոֆ. Քրիսա Մալտեզուն իր զեկուցումն անվանել էր «Վենետիկի տիրապետության դարաշրջանի օրթոդոքս եկեղեցու պատմության վավերագիր մասնարաժինը», ուր անդրադառնում էր Կ.Պոլսի ա-

ռումից հետո բյուզանդական եկեղեցիների պահոցներում պահպանված վենետիկյան վավերագրերին և դրանց նշանակությանը: Ռուանի համալսարանի պրոֆ. Ժիլ Գրիվոն անդրադարձավ չափազանց հետաքրքիր մի խնդրի. «Լուսինյանները հունական եկեղեցու պատրոններ», ուր անդրադարձ կատարեց լատին իշխանավորների կողմից հունական եկեղեցիների ֆինանսական և բարոյական հովանավորման քաղաքական դրդապատճառների վրա:

Բալկանների բազմազգ տարածաշրջանում IV խաչակրության քաղաքական, եկեղեցական և մշակութային ազդեցությունների հետազոտությանն էին նվիրել իրենց զեկուցումները դր. Բասիլ Յորդուլեսկուն («Վատ հայտնի կանոնական մի կրճիմի նոր բացատրությունն. XIV դարի վերջին հունգարովալաիիայի աթոռին ձեռնադրված երկու մետրոպոլիտներ»), Բուխարեստի համալսարանի պրոֆ. Էմիլիան Պոպեսկուն («IV խաչակրությունը և դրա հետևանքները Վերին Դանուբի տարածաշրջանում կաթոլիկության տարածման համար»), Սոֆիայի համալսարանի պրոֆ. Վաոիլկա Տասլկովա-Յայմովան («Օխրիդայի ինքնագլուխ արքեպիսկոպոսությունը. դրա փոխհարաբերությունները Կ. Պոլսի պատրիարքության և Բալկանների մյուս եկեղեցիների հետ»), Ռումինիայի ԳԱ աշխատակից Զամֆիրա Միխայելը («Արևմտյան մատենադրական երկերի յուրացումը XIII–XIV դդ. օրթոդոքս վանքերում»), իսկ Մադրիդի Բանասիրության ինստիտուտի հունալատինական բաժնի աշխատակից Պեդրո Բաղենաս դե լա Պենան ունկնդիրների ուշադրությունը հրավիրեց «Օրթոդոքսությունը և ազգային ինքնագիտակցությունը Բալկաններում միջնադարի վերջում» հարցադրման վրա: Պալամիզմի և պատկերապաշտության աստվածաբանության խնդիրների վրա էր կառուցել իր զեկուցումը դր. Միխայել Բրատյուն:

Գիտաժողովի նախավերջին նիստն ամբողջովին նվիրված էր արվեստի և հնագիտության հարցերին: Առանձնապես հետաքրքրությամբ լսվեց Ֆրանսիայի ազգային գիտական հետազոտությունների կենտրոնի աշխատակից Ատավրիոս Լազարիսի («Եկեղեցին և մշակույթի նորացումը Պալեոլոգների դարաշրջանում. պատկերադրության և բնադիր սկզբնաղբյուրների կապը») զեկուցումը. պարզվեց, որ XV դ. արաբերենից հունարեն է փոխադրվել նույն դարաշրջանում հայերեն թարգմանված Ձիաբուծարանը: Յանինայի համալսարանի պրոֆ. Նանո Խացիկադիսի («Պատկերագրության արվեստը լատինական զավթման դարաշրջանի Հունաստանում») և Իվան Դույչևի հետազոտական կենտրոնի տնօրեն, պրոֆ. Աքսինիա Ջուրովայի («Նոր տեղեկություններ Ատրասբուրգի գրադարանի ձեռագրական ֆոնդի պատկերադիր հունարեն ձեռագրերի մասին») ելույթները նվիրված էին մանրանկարչությանը, իսկ պրոֆ. Լյուդմիլա Խրուշկովան (Մոսկվա) ներկայացրեց «Եկեղեցական և արվեստաբանական փոխհարաբերությունները Պալեոլոգների դարաշրջանում, Արևմտյան Վրաստանի և Կոստանդնուպոլսի միջև» զեկուցումը, ուր հիմնականում անդրադարձավ Աբխազիայի և մերձսևծովյան տարածաշրջանի XIV – XV դդ. եկեղեցաշինությանը:

ԱԶԱՏ ԲՈՋՈՅԱՆ